Արձանագրություն թիվ 2

ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-17/04 ծածկագրով, գնանման հարցում ընթացակարգով ապրանքների՝ Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման, գնահատող հանձնաժողովի նիստի

Ք.Երևան 04 հոկտեմբերի 2017թ.

Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Նաիրա Մելիքբեկյան

Անդամներ՝ Հայկ Սարգսյան

Էդգար Սարգսյան

Գնումների համակարգող՝ Ռազմիկ Առաքելյան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԳ-ԳՀԱՊՁԲ-17/04 ծածկագրով, ապրանքների՝ Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման հայտերը ներկայացնելու մասին,
2. Մասնակիցների կողմից առաջարկված գների մասին,
3. Հանձնաժողովի որոշումների մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին,

1. Հայտերը ներկայացրել են հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակցի անվանումը	Հասցեն, հեռախոսը
1	« Ինո-Թեքնոլոջի » ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Աբովյան 29, թիվ3 տարածք, հեռ. 010 58 63 05,
2	« ՏՈՄԷՐ » ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Լվովյան 5, բն. 93 հեռ. 098 87 55 88,
3	« Կոմպասս » ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Չարենցի 66, հեռ. 010 52 37 37,
4	« Կոմպմարկետ » ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Գյուլբենկյան 27/1 հեռ. 010 54 29 31,

1.1 Մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան,

1.2 Մասնակիցների հայտ պարունակող ծրարներում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են, կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

2. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների՝

(ՀՀ դրամ)

Չ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Մասնակցի անվանումը և առաջարկած գինը (առանց ԱԱՀ)			
				Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ	ՏՈՄԷՐ ՍՊԸ	Կոմպասս ՍՊԸ	Կոմպմարկետ ՍՊԸ
1	Համակարգիչ i5 - 4րդ սերունդ (սեղանի)	հատ	6	1999500	-----	2220000	1962000
2	Համակարգիչ i3 - 4րդ սերունդ (սեղանի)	հատ	6	1735500	2250000	2025000	1704000
3	Օպերատիվ հիշողություն ՌԱՄ 16ԳԲ (ram16GB)	հատ	2	242500	------	------	------

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Ըստ գնային և նվազագույն գնային առաջարկների՝ 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել ներքոնշյալ ընկերություններին, հետևյալ չափաբաժիններով՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի անվանումը	2-րդ տեղ զբաղեցրած Մասնակցի անվանումը
1	Համակարգիչ i5 - 4րդ սերունդ (սեղանի)	Կոմպմարկետ ՍՊԸ	Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ
2	Համակարգիչ i3 - 4րդ սերունդ (սեղանի)	Կոմպմարկետ ՍՊԸ	Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ
3	Օպերատիվ հիշողություն ՌԱՄ 16ԳԲ (ram16GB)	Ինո-Թեքնոլոջի ՍՊԸ	---------

3.2 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

3.3 ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի (ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը): Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում մերժել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վերաբերյալ.

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա՝ «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի նիստերի սրահում (Թամանյանական մասնաշենքի 2-րդ հարկ), ք. Երևան, Տերյան 72 հասցեում, առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող ոչ ուշ, քան երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00 -ին:

Ընդունվեց կողմ՝ 3, դեմ՝ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝

Նաիրա Մելիքբեկյան _____

Անդամներ՝

Հայկ Սարգսյան _____

Էդգար Սարգսյան _____

Գնումների համակարգող՝

Ռազմիկ Առաքելյան _____